1864.
23 Յուլիսի
ըստ հին տոմարի ։

Թիւ 21.
ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ։

1864.
4 Օգոստոսի
ըստ նոր տոմ.

Registered at the General Post-Office for transmission abroad.

# ԵՐԿՐԱԳՈՒՆԴ

## ԼՐԱԳԻՐ ՄԱՆՉԵՍՏԵՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԻՏՆԱԿԱՆ, ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ։

Հրատարակութեան, մատակարարութեան եւ բաժանորդագրու- թեան կեդրոնն է Մանչեստր։

—Նամակներ, յօդուածներ, գիրք եւ դրամներ (ազատ ի ծախուց փոստայի) ուղղելի յանուն Ասպետ Կարապետ Վ. Շահնազարեանց, գերեւ այսպէս.

M. le Chevalier K. Vardapete Shahnazariantz,
151, Rumford Street, Manchester, (Angleterre.)

Տարեկան գինն հանդերձ ծախուց փոստայի, ամ երկրաց Անգլիոյ եւ Ֆրանսայի շիլինգ եւ շիլինգ, է 25 շ. ֆ.
—Այն երկիրներ, ուր ծախուց փոստայի ծախքն առանձին է.
—Վենետիկոյ . . . . . . . . . 13 „
—Եգիպտոսի . . . . . . . . . 7 „
—Մեկ թերթի գինն է Մանչեստր է . . . . 5
Այլուր . . . . . . . . . 7
—Բաժանորդագրութեան պայման տարեկան միայն եւ կանխիկ։

Ստորագրութեան տեղիքն են Կոստանդնուպոլիս Սարգիս Աղայ Մ. Հիսարլեանի սեննակն ի Ղալաթա. —Իզմիր Մարկոսեան Յակոբ Աղայի սեննակն.—Հալէպ Յովհաննէս Աղայ Քիւրքճեանովի սեննակն. —Սուրբ Երուսաղէմ Արժանապատիւ Եսայի Վարդապետի սեննակն. —Աղեքսանդրիա (Եգիպտոս) Տէր Գասպարեան Ղազարոս Աղայի սեննակն. — Կալկաթա Գ. Պետրոս Սարգսեանցի սեննակն. — Բաթաւիա Գ. Մանուկ Որդանանեանի սեննակն. — Լոնդոն Աղայ Մաքսուտոֆֆի սեննակն. — Փարիս Աղայ Պօղոս Արփաճեանի սեննակն.—Մարսիլիա Աղայ Մարգար Պապիկեանցի և Աղայ Յարութիւն Անդրէասեանի սեննակներն ։ Առ այժմ ուզողներն կրնան վերոգրեալ սեննեկաց մէկէն ստանալ մինչև որ յատուկ գործակալներ հաստատեմք բազմաց և ընթերցասէր քաղաքներ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ։

Ազգ.—Տեսութիւն Քաղաքականութեան.—Ֆրանսա.—Յունաց.—Անգղիա այսպէս է խօսէր.—Վերջին Լուրեր.—Եղեւական Ազդարար.—Առեւտրական։

## ԱԶԳ

Կենսաման մէկ ախտ, (գիտնոտ ախտն) որոյ սերմն զուցէ, երկար ատեն ի վեր, մեր կազմա- ծանոյ մէջ տարրացեր է, ծորդեալ ընդ խոստ բրոնզիդի, որ խոնաւ բնակարանի և փոփոխական կլիմայի արդիւնք է, չորս ամիսէ հետէ չոր հազով, կարճ և ծանր շնչառութեամբ, ընդհանուր անդա- մոց թուլութեամբ և տենդով զմեզ կապեց։ Մեք ոչ դրամ խնայեցինք, ոչ հոգս և ոչ ժուժկալու- թիւն մեր խանգարեալ առողջութիւնն վերստին ստանալու համար. այլ մեր ախտն գնալով գնաց եւ զայրացաւ. ուստի Փարիսի և Մանչեստրի առաջին կարգի բժշկաց որոշմամբն հարկ եղաւ մեզ Բրիստոլի հանրային ջուրերն երթալ և 6 շաբաթու չափ հոն զարմանիլ։

Այս ճգնողական պարագայիս մէջ շատ բարե- կամներ մեզ խորհուրդ տուին Երկրագունդն առժամանակ մի դադրեցնել. յիրաւի հարկն ալ այնպէս կպահանջէր, սակայն մեր Յարգոյ Բա- ժանորդաց ակնկալութիւնն և վստահութիւնն պա- րտալի չհանելու համար եւ ոչ մեր ձեռնարկն, զոր այնպէս կսիրեմք, ինչպէս գթոտ մէկ ծնող իր միակ զաւակն, մեք որոշեցինք միջին մէկ ճամ- բայ բռնել, այն է 6 կամ 8 շաբաթ, որչափ որ մեր բացակայութիւնն տեւէ, ութ երեսով հանելուն տեղ չորս երեսով միայն հանել. եւ ասկէ մի հան- գիստ ասնլով մեր անձն հոգալ։ Յետոյ, երբ բարեգութն Աստուած, մեր մեղքն չյիշելով զմեզ կատարելապէս բժշկէ՝ այնուհետեւ, որքան կարելի է, շուտով Երկրագունդն իր առջի դիրքովն, այսինքն քառածալ կհրատարակուի։

Կաղաչեմ ամեն բարեմիտ և բարեպաշտ եկե- ղեցականներ և աշխարհականներ, որք մեր անար- ժանութեան կենդանութիւնն օգտակար կհա- մարին Հայաստանեայց մի, սուրբ, ընդհանրական և առաքելական եկեղեցւոյ և մեր ամենասիրելի ազգի ծառայութեան ասպարիզին մէջ, յանձն առնուն իրենց ջերմագին աղօթքն մերինին հետ կցել և Ամենաբարձրելոյ աթոռին ուղղել, Որ խնամն է հիւանդաց և մահու. զի թերեւս այցելու- թեամբ այց արասցէ մեզ և մեր առջի առողջու- թեան մէջ վերահաստատէ։

## ՏԵՍՈՒԹԻՒՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ֆրանսայի կառավարութիւնն այլ և այլ տէրու- թեանց շրջաբերական խաւրեց հրաւիրելով մասնակից ըլլալ համազգային ժողովին, որ աշնան սկիզբն պիտի գումարուի Եւրոպայի հետագրա- կան հաղորդութիւններն կարգաւորելու համար։

— Երկուշաբթի և երեքշաբթի Ռենդսբուրգ Հանովրի և Պրուսիոյ զինուորներու մէջ մէկ կռիւ պատահեցաւ. և եռքիններէն շատ անձինք փո- ղոցներու մէջ վիրաւորեցան։ Պրուսիոյ զօրքն բոլոր գիշերն զէն ի ձեռին անցուցին։ Թերեւս այս ըլլայ պատրուակն, ըստ որոյ Պրուսիա կպահանջէ որ Գերմանական Դաշնակցութեան զօրքն Հոլշ- տէյն պարպեն։

—Հարաւի (Ամերիկայի) թերթերն կըսեն թէ. Պետերսբուրգ քաղաքն Հիւսիսայնոց յարձակ- մանցն շատ աղէկ կրնայ դիմանալ և Ռիչմոնդի հետ ապահով հաղորդութիւն ունենալ։ Աստ պաշար կայ հոն. և պահակն լաւ վիճակի մէջ է. եւ հասարակաց կարծիքն է թէ Լի կատարելապէս կուրէ վիճակին։ Ռիչմոնդի մէջ ամեն բան հան- դարտ է և քաշուած. թատրոններն գոց են. եկե- ղեցիներն՝ միշտ բաց, ուր զինուոր և քաղաքացի կյաճախեն։ Հարուստ քաղաքացւոց տուներն հիւանդանոցի փոխուեր են եւ տիկիններն անխոնջ կխնամեն հիւանդներն և վիրաւորներն։

—Վիեննայի լուրերն կըսեն Դանմարգի-Գեր-

